ք. Մարտունի

11.02.2025թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N119

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2014թ. 1325-ն որոշման 28-րդ կետը և «Լիճք » հանքային ջրերի գործարան ՍՊԸ-ի կողմից Լիճք բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող ածխաթթվային հանքային ջրերի գործարանի կառուցման և արտադրության աշխատանքների վերաբերյալ սույն թվականի հունվարի 24-ին կայացած հանրային 1-ին քննարկման արձանագրությունը, առաջարկում եմ ավագանու նախնական համաձայնությանը ներկայացնել «Լիճք » հանքային ջրերի գործարան ՍՊԸ-ի կողմից նախատեսվող Լիճք ածխաթթվային հանքային ջրերի գործարանի կառուցման և արտադրության աշխատանքների իրականացմանը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԻՃՔ ԲՆԱԿԱՎԱՅՐ

№ 20

«10» փետրվարի 2025թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք,
Լիճք բնակավայր, Ա-2 թղմ. 12փ. 16շ.
☎ (094) 62 63 80
Էլ. փոստ՝ lichk-gp@mail.ru

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԵՎԵՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հովեյան.

24.01.2025թ. Լիճք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի է ունեցել «Լիճք» հանքային ջրերի գործարան ՍՊԸ-ի կողմից նախաձեռնված, Լիճք բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող Լիճք ածխաթթվային հանքային ջրերի գործարանի կառուցման և արտադրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկում (1-ին փուլ):

Խնդրում եմ Ձեզ հարցը ներառել ավագանու հերթական նիստի օրակարգում՝ գործընթացը շարունակելու վերաբերյալ համաձայնություն ստանալու համար:

Առդիր 5 էջ:

ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՐԱԿԱՆ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ

Կատարող՝ առաջատար մասնագետ (Լիճք) Հ.Հարությունյան
Հեռ 093058057

2015թ. հունվարի 24-ին, ժամը 12.00-ին Հ. Թումանյանի անվան թանգարանի մասնաշենքում գործող Հանրակրթական դպրոցական խորհրդի նախագահության նիստ հրավիրվեց հետևյալ օրակարգով՝ 1. Դպրոցական խորհրդի գործունեության արդյունքների ամփոփում, 2. Դպրոցական խորհրդի գործունեության ուղղությունների հաստատում, 3. Դպրոցական խորհրդի գործունեության ծրագրի քննարկում, հաստատում, 4. Դպրոցական խորհրդի նախագահի ընտրություն։

Հ/հ	Անուն, ազգանուն, հայրանուն	ստորագրություն
1	Գոռ Գևորգի Հակոբյան	
2	Հրանտ Հրաչյա Հակոբյան	
3	Նելլի Գրիգորյան	
4	Լուսինե Գագիկի	
5	Հասմիկ Հրաչիկի	
6	Արմեն Հակոբ	
7	Հասմիկ Գրիգոր	
8	Հասմիկ Արայի	
9	Տիգրան Գուրգեն	
10	Հարությունյան Վարազդատ	
11	Գրիգորյան Դավիթ	
12	Սարգսյան Հարություն	
13	Հակոբյան Հակոբ	
14	Գևորգյան Գևորգ (Հակոբի)	
15	Հասմիկ Նուսիկ	
16	Բաղդասարյան Գոռան	

17	[illegible]		[illegible]
18	[illegible]	[illegible]	[illegible]
19	[illegible]	[illegible]	[illegible]
20	[illegible]		[illegible]
21	[illegible]		[illegible]
22	[illegible]	[illegible]	[illegible]
23	[illegible]	[illegible]	[illegible]
24			
25			
26			
27			
28			
29			
30			
31			
32			
33			
34			
35			
36			
37			

17.01.2025թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզ գ.Լիճք

Լիազորագիր

<<Լիճք հանքային ջրերի գործարան>> սահմանափակ պատասխանատվության ընկերությունը, /ՀՎՀՀ 08201485/, ի դեմս տնօրեն՝ Լյո Ծիքունի /EJ8329817,տրվել է 10.02.2023թ/ որը գործում է ընկերության կոնոնադրության հիման վրա, սույնով լիազորում է Գուրգեն Լյովայի Հակոբյանին /AR0445592 տրվ. 003-ի կողմից 05.09.2017թ- և/ ընկերության անունից էլեկտրոնային ստորագրությամբ հաստատել դիմումներ և ներկայացնել ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն, ՀՀ Ոստիկանություն, Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք և այլ պետական գերատեսչական մարմիններում սույն լիազորության հետ կապված կատարել բոլոր անհրաժեշտ գործողություններ:

Լիազորագիրը տրվում է վեց ամիս ժամկետով՝ առանց վերալիազորման իրավունքի:

Լիճք հանքային ջրերի գործարան ՍՊԸ
Տնօրեն՝

Լյո Ծիքուն

Հեռ. 096999608

«ԼԻՃՔ»
"ЛИЧК"
"LICHK"
08201485

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի հունվարի 24-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի վարչական շենքի տարածքում տեղի ունեցավ հանրային լսում: Օրակարգում՝ «Լիճք հանքային ջրեր գործարան» ՍՊ ընկերության կողմից Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի վարչական տարածքի Ա-6 թաղամասի 23-րդ փողոցի 1/2 հասցեում նախատեսվող Լիճք ածխաթթվային հանքային ջրերի գործարանի կառուցման և արտադրության աշխատանքների վերաբերյալ հանրային 1-ին քննարկումն է:

Հանրային քննարկման ընթացում, որը տեսաձայնագրվում էր, մուտքի խոսքով հանդես եկան ՀՀ Մարտունի համայնքի ներկայացուցիչներ՝ համայնքի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հարություն Հարությունյանը և Լիճք բնակավայրի վարչական ղեկավար Սիրական Սիրականյանը, ապա խոսքը տրամադրվեց «Լիճք հանքային ջրեր գործարան» ՍՊ ընկերության ներկայացուցիչներ Գ. Հակոբյանին և Ա. Ավագյանին:

Ընկերության ներկայացուցիչ Գ. Հակոբյանը նշեց և հանդամանալից ներկայացրեց լսումների ու դրա հետագա ՇՄԱԳ փորձաքննական գործընթացի ընթացակարգը, առաջնային ուշադրություն դարձնելով գործարանի կառուցման և շահագործման ընթացքում փոշու ցրմանը, տարածքի կանաչապատմանը, ենթակառուցվածքների հեռավորությանը, առկա ճանապարհների վիճակին, դրանց շահագործման արդյունքում առաջացած փոշու նվազեցմանը, ջրային և հողային ռեսուրսների պահպանությանը ուղղված միջոցառումներին և համայնքի սոցիալական ծրագրերի մասնակցությանը: Շեշտվեց, որ գործարանը կառուցվելու է նախկինում շահագործված, իսկ ներկայումս ապամոնտաժված Լիճքի ածխաթթու հանքային ջրերի գործարանի տարածքում: Նշվեց նաև, որ նախագծային լուծումներում բնակելի հատվածից և գոյություն ունեցող ենթակառուցվածքներից ու ճանապարհներից կառուցապատման տարածքի հեռավորությանը վերաբերվող ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան նորմերը և պահանջները պահպանված են:

Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց նաև համայնքի ազդակիր ներկայացուցիչների, ՀՀ Մարտունի համայնքի ներկայացուցիչներ Հարություն Հարությունյանի, Սմբատ Սմբատյանի, Վարդան Վարդանյանի, մարզպետարանի աշխատակիցներ՝ Հակոբ Հարությունյանի և Դավիթ Զանգելարյանի կողմից բարձրացված մի շարք հարցերին: Հարցերը հիմնականում վերաբերվում են գործարանի կառուցման և շահագործման ժամկետներին առկա ճանապարհների օգտագործմանը, գործարանի տեղադիրքին ու տարածքի հողի նպատակային նշանակությանը, պետական մայրուղուց հեռավորությանը, անվտանգությանը, գործարանի արտադրողականությանը և տեղանքի մաքրությանը, նոր ստեղծվող աշխատատեղերին, ինչպես նաև սոցիալական ծրագրերի ուղղվածությանը: Լիճք

բնակավայրի վարչական ղեկավարը արտահայտվեց գործարանի արտադրանքի անվանման մեջ «Լիճք» բրենդի պահպանության անհրաժեշտության վերաբերյալ: Ընկերության ներկայացուցիչ Գ. Հակոբյանը պատասխանեց նաև հնչեցած այլ հարցերին՝ հաստատեց որ իր կողմից պարզաբանված այդ բոլոր հարցերի պատասխանները և լուծումները ներառված կլինեն լիազոր մարմնին ներկայացվող փաթեթում և դրական արդյունքի դեպքում ընկերության կողմից միանշանակ կիրականացվեն գործարանի կառուցման և շահագործման փուլերում:

Եղավ մտքերի փոխանակություն:

«Լիճք հանքային ջրեր գործարան» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Գուրգեն Հակոբյանը հայտնեց, որ նախատեսվում է ստեղծել նոր շուրջ 50-60 աշխատատեղ միջինը 150000 դրամ ամսեկան աշխատավարձով և ներգրավվող աշխատողների զգալի մասը կլինեն Լիճք բնակավայրի բնակիչներից:

Հանրային քննարկումների արդյունքում 22 Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ներկայացուցիչ Հարություն Հարությունյանը հայտնեց համայնքի դրական դիրքորոշումը:

Ազդագիր բնակավայրի լսումների ընթացքում հնչեցրած կարծիքը կքննարկվի և նախնական համաձայնության դեպքում՝ «Լիճք հանքային ջրեր գործարան» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Լիճք ածխաթթվային հանքային ջրերի գործարանի կառուցման և արտադրության աշխատանքների իրականացնելու վերաբերյալ ավագանու որոշման արդյունքում կտրվի նախնական համաձայնություն՝:

Մարտունի համայնքի ղեկավար Հ. Հովեյան

«Լիճք հանքային ջրեր գործարան»

ՍՊԸ-ի տնօրեն՝ Լ. Ծիրունից